



ՄԵՐԿ ԱՇԽԱՏԱՆՔ

ոչ դոմինանտ Էթնիկ խմբերը գյուղատնտեսության մեջ

Մերկ աշխատանք

Ոչ դոմինանտ էթնիկ խմբերը գյուղատնտեսության մեջ

Սոցիալական արդարության կենտրոն

Թբիլիսի, 2022



Փաստաթուղթը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամի (OSGF) աջակցությամբ, որի բովանդակության համար ամբողջությամբ պատասխանատու է Սոցիալական արդարության կենտրոնը:

Փաստաթղթում արտահայտված տեսակետները կարող են չհամընկնել դոնոր կազմակերպության դիրքորոշումների հետ:

Ղեկավար՝ Թամթա Միքելաձե

Հետազոտող՝ Քամրան Մամեդլի

Հետազոտության ասիստենտ՝ Տիգրան Թարգյան, Անի Իսակաձե

Խմբագիր՝ Մեդեա Իմերլիշվիլի

Կազմի ձևավորում՝ Մալոմե Լացաբիձե

Առանց կազմակերպության գրավոր թույլտվության արգելվում է նշված նյութի վերատպումը, վերարտադրումը կամ տարածումը կոմերցիոն նպատակներով:

Մեջբերման կարգ. Սոցիալական արդարության կենտրոն, Քամրան Մամեդլի, « Մերկ աշխատանք - ոչ դոմինանտ էթնիկ խմբերը գյուղատնտեսության մեջ», 2022

© Սոցիալական արդարության կենտրոն

Հասցե՝ Ի. Աբաշիձեի 12բ, Թբիլիսի, Վրաստան

Հեռ՝ +995 032 2 23 37 06

<https://socialjustice.org.ge/>

info@socialjustice.org.ge

<https://www.facebook.com/socialjustice.org.ge>

Բովանդակություն

Ներածություն	4
Հետազոտության մեթոդաբանություն և սահմանափակումներ	6
Միջազգային իրավական շրջանակ	7
Հետազոտության բացահայտումներ	10
Ներառականության քաղաքականություն՝ ծառայությունների և ծրագրերի իրականացման մեջ.....	10
Լեզվի քաղաքականություն փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ	16
Գյուղատնտեսական նշանակության հողերի բաշխման հարցը	18
Ոռոգման համակարգեր, ենթակառուցվածքներ և գյուղատնտեսական տեխնոլոգիաներ...	22
Նոր գիտելիքների փոխանակում բնակչության հետ	23
Հատուկ ծրագրեր և տեղական կարիքներ	25
Եզրակացություն և ռեկոմենդացիաներ	27

Ներածություն

Վերջին տարիներին պետությունը զգալի ներդրումներ է կատարում գյուղատնտեսության զարգացման համար: Կայուն զարգացման սկզբունքների հիման վրա Վրաստանի գյուղատնտեսության զարգացման ռազմավարական տեսլականները նախորդ տարիներին և 2021-2027 թվականների նոր շրջափուլում նախատեսում են այնպիսի միջավայրի ստեղծում, որը կնպաստի ագրոպարենային ոլորտում մրցունակության բարձրացմանը, բարձրորակ արտադրանքի արտադրության կայուն աճին, պարենային անվտանգության ապահովմանը, սննդի անվտանգությանն ու գյուղական վայրերում աղքատության հաղթահարմանը: Գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման 2021-2027 թվականների պետական ռազմավարության համաձայն՝ «2012 թվականից ի վեր Վրաստանի կառավարությունը կարևոր և աննախադեպ քայլեր է ձեռնարկել երկրի գյուղատնտեսության և գյուղի զարգացման համար»,¹ որի նպատակն է երկրի կայուն զարգացումը և ներառական տնտեսական աճը: Չնայած այն հանգամանքին, որ պետությունը տարեկան հարյուր միլիոնավոր լարի է ներդնում գյուղատնտեսության մեջ և չափից ավելի սուբսիդիաներ է տրամադրում, մի շարք փորձագետներ կասկածում են այս ոլորտի շահութաբերությունը:² Քննադատության հիմքերից մեկն այն է, որ չնայած աճող աջակցությանը, գյուղատնտեսության ոլորտում տնտեսական աճը դեռ տասն անգամ ցածր է ընդհանուր տնտեսական աճի ցուցանիշից:³ Հարկ է նշել, որ ելնելով սոցիալական պետության և հավասարության սկզբունքներից և կայուն տնտեսական զարգացման համար՝ պետության կողմից գյուղատնտեսության աջակցությունը, և դրա զարգացմանն ուղղված գերակտիվ աշխատանքը սկզբունքորեն կարևոր է, քանի որ Վրաստանի բնակչության 41%-ը դեռևս զբաղված է գյուղատնտեսությամբ, իսկ որոշ շրջանների համար այն տնտեսության առաջատար ոլորտ է ներկայացնում,⁴ իսկ երկրի սպառողական զամբյուղի 80%-ը ներմուծվող ապրանքներ են:⁵

Երբ խոսվում է գյուղատնտեսության և աղքատության հատման մասին, կարևոր է հաշվի առնել տնտեսական խորը անհավասարությունը, որն արդեն առկա է կենտրոնի և շրջանների միջև: Կյանքի մակարդակի առումով էական տարբերություններ կան գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև: Օրինակ՝ 2018 թվականին գյուղական տնային տնտեսությունների համեմատ քաղաքային տնային տնտեսությունների միջին ամսական եկամուտը 19.0%-ով բարձր է եղել: Նույն տարում բացարձակ աղքատությունը գյուղական բնակավայրերում կազմել է 23.1%, իսկ քաղաքներում՝ 18.0%:⁶ Կենտրոնի և շրջանների միջև եղած անհավասարությունը

¹ Վրաստանի գյուղատնտեսության և գյուղի զարգացման ռազմավարություն 2021-2027
<https://mepa.gov.ge/Ge/Files/ViewFile/27243>

² Վրաստանի գյուղատնտեսությունը պետության սոցիալական քաղաքականության մի մասն է
<https://forbes.ge/saqarthvelos-sophtis-meurn/>

³ Վրաստանի գյուղատնտեսության հիմնական միտումները 2012-2019 թթ
https://transparency.ge/sites/default/files/sakartvelos_sophtis_meurneoba.pdf

⁴ Նույն

⁵ Վրաստանի գյուղատնտեսությունը պետության սոցիալական քաղաքականության մի մասն է
<https://forbes.ge/saqarthvelos-sophtis-meurn/>

⁶ Վրաստանի գյուղատնտեսության և գյուղի զարգացման ռազմավարություն 2021-2027
<https://mepa.gov.ge/Ge/Files/ViewFile/27243>

նկատվում է նաև բազային ենթակառուցվածքների զարգացման որակի մեջ, որն ակնհայտորեն մեծ ազդեցություն է ունենում շրջանների զարգացման հնարավորությունների վրա: Օրինակ՝ ճանապարհների, հասարակական տրանսպորտի, էլեկտրաէներգիայի և այլ էներգետիկ միջոցների անսարք համակարգերն ուղղակիորեն ազդում են գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիների և ֆերմերների առօրյայի վրա:

Մինևս ժամանակ, գյուղատնտեսության մեջ տնտեսական անհավասարությունները շարունակում են մնալ էական մարտահրավեր: Բացառությամբ կոոպերատիվների, գյուղատնտեսության նախարարությունը չի պարզաբանում, թե ինչ է նշանակում փոքր և ընտանեկան տնտեսություն, կամ ֆերմեր:⁷ Կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք և էթնիկ փոքրամասնությունները համարվում են գյուղատնտեսության մեջ հատկապես խոցելի խմբեր, որոնք հաճախ չունեն հողատարածք կամ չեն օգտվում գոյություն ունեցող ծրագրերից: FAO-ի 2019 թվականի զեկույցի համաձայն՝ անհրաժեշտ է ավելի լավ տեսնել այդ խմբերի կարիքները և հատուկ քայլեր ձեռնարկել դրանց լուծման համար:⁸ Ըստ 2021 թվականի «Human Development Index»-ի (HDI), չնայած համաձայնակալի ճգնաժամին, Վրաստանն ունի շատ բարձր ցուցանիշ (0.802): Մակայն ըստ տարբեր սոցիալական խմբերի և շրջանների անհավասարությունների հաշվման արդյունքում ցուցանիշը նվազում է 12 կետով և հասնում 0.706 բալի:⁹

Վերջին տարիներին միջազգային կազմակերպությունների աջակցության և Եվրոպական միության հետ խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու մասին համաձայնագրի արդյունքում գյուղատնտեսության աջակցության ծրագրերը դարձել են ավելի կառուցվածքային, միասնական և թափանցիկ:¹⁰ Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարության շրջանակներում ստեղծված Գյուղի զարգացման գործակալությունը որոշակիորեն միավորել է բոլոր ծրագրերն ու ծառայությունները, որոնք առնչվում են գյուղական վայրերում իրական բարեկեցություն ստեղծելու պետության ջանքերին:¹¹

Այս փաստաթղթի նպատակն է քննադատական հարցեր տալ և դիտարկել գյուղատնտեսության ոլորտում կառավարության ծրագրերն ու ներդրումները մի ոսպնյակի միջոցով, որը հնարավոր է անտեսվում է նախարարության և համապատասխան գերատեսչությունների կողմից: Այսպիսի խնդիրներից մեկը գյուղատնտեսությամբ զբաղվող ոչ դոմինանտ էթնիկ խմբերի կարիքներն են:

Սոցիալական արդարության կենտրոնի ակտիվ աշխատանքը ոչ դոմինանտ էթնիկ խմբերով բնակեցված շրջաններում ցույց է տալիս, որ էթնիկ փոքրամասնություններ ներկայացնող գյուղացիները հաճախ չեն կարողանում օգտվել գյուղատնտեսության ոլորտում առկա ծրագրերից և նախագծերից, նրանք հաճախ խոսում են իրենց գյուղերում հողային ռեսուրսների

⁷ <https://www.fao.org/3/ca9822en/CA9822EN.pdf>

⁸ Նույն

⁹ Georgia ranks high on Human Development Index <https://www.undp.org/georgia/press-releases/georgia-human-development-index>

¹⁰ Խորացված հարցազրույց փորձագետի հետ, հարցվող N1.

¹¹ Գյուղի զարգացման գործակալություն <http://www.rda.gov.ge/ge/static/chvenshesakheb>

անարդար և խտրական բաշխման փորձի մասին, ինչը 90-ականների, ինչպես նաև վերջին տարիներին սեփականաշնորհման մասնատված և չվերահսկվող գործընթացի արդյունքն է: Էթնիկ փոքրամասնությունների գյուղերում ռոռզման ջրի համակարգերը հաճախ անսարք են և ծանր բեռ են ներկայացնում տեղի բնակիչների համար: Գյուղատնտեսական նոր ծրագրերի և գիտելիքների հասանելիությունը նույնպես սահմանափակ է այս խմբերի համար: Չնայած այս ամենին, փոքրամասնությունների ներկայացուցիչները շարունակում են աշխատել ինքնակազմակերպմամբ, սեփական աշխատանքով և գյուղատնտեսության ավանդական մեթոդներով և նույնիսկ մի շարք ապրանքատեսակների արտադրությամբ առաջատար են երկրում: Օրինակ՝ 2018 թվականի տվյալներով, Վրաստանում կարտոֆիլի ամենամեծ արտադրողը Մամցխե-Ջավախեթի շրջանն է, իսկ կաթնամթերքի և անասնաբուծության առումով ամենաարդյունավետ տարածաշրջանը եղել է Քվեմո Քարթլին:¹²

Ելնելով այս ամենից՝ կարևոր է հարցեր տալ, թե ինչպես են գյուղատնտեսական գերատեսչությունները աշխատում էթնիկ խմբերին աջակցելու համար, ինչպես են պետական և միջազգային ներդրումները բաշխվում ըստ տարածաշրջանների, ինչպես է պետությունն օգնում այն ոլորտներին, որտեղ ներգրավված են էթնիկ փոքրամասնությունները: Հետաքրքիր է նաև, թե սոցիալական որ խմբերն են հիմնականում աջակցություն ստանում պետությունից՝ փոքր ֆերմերները, թե խոշոր գործարարները, ինչպես են ձևավորվում գյուղատնտեսության առաջնահերթ ոլորտները և ինչպես են որոշումներ կայացվում այս կամ այն ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ:

Գյուղատնտեսության ոլորտում աջակցության և ներդրումների ավելացման ֆոնին կարևոր է դիտարկել, թե ըստ տարբեր շրջանների՝ որքան արդար, ներառական և հավասար են նշված ռեսուրսները հասնում անմիջական գյուղացուն և ֆերմերին, և որքանով են հասանելի այդ ծրագրերն ու նախագծերը տարբեր խմբերի համար:

Հետազոտության մեթոդաբանություն և սահմանափակումներ

Փաստաթղթում որպես հետազոտության մեթոդաբանություն կիրառվում է որակական մեթոդը, որի շրջանակներում իրականացվել է 21 խորացված հարցազրույց: Այստեղից 5 հարցազրույց է անցկացվել գյուղատնտեսության ոլորտի փորձագետների հետ, 4 հանդիպում է անցկացվել Մառնեուլիի, Բոլնիսիի, Նինոծմինդայի և Ախալքալաքի խորհրդատվական կենտրոնների ներկայացուցիչների հետ: Մեկ հանդիպում է տեղի ունեցել Գյուղի զարգացման գործակալության ներկայացուցիչների հետ, մեկ հանդիպում՝ Գյուղատնտեսական գիտահետազոտական ինստիտուտի ներկայացուցչի հետ, և 5-5 հանդիպում էթնիկ ադրբեջանցի և հայ գյուղացիների/ֆերմերների հետ:

Բացի այդ, փաստաթղթի հեղինակները անցկացրել են գրասենյակային հետազոտություն, որով ուսումնասիրվել է շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարության, Գյուղի զարգացման գործակալության, Գյուղատնտեսական

¹² Վրաստանի վիճակագրության ազգային ծառայություն <https://www.geostat.ge/ka/modules/categories/93/regionuli-statistika>

գիտահետազոտական կենտրոնի, Հողի կայուն կառավարման և հողօգտագործման մոնիտորինգի ազգային գործակալության, Վրաստանի մելիորացիայի և այլ գերատեսչությունների կայքերը: Նաև ուսումնասիրվել է Վրաստանի գյուղատնտեսության և գյուղի զարգացման 2021-2027 թվականների ռազմավարությունը: Ինչպես նաև, պահանջվել է հանրային տեղեկություն գյուղատնտեսության ոլորտում առկա ծրագրերի և նախագծերի վերաբերյալ:

Փաստաթուղթը հիմնականում գնահատում է պետության քաղաքականությունը գյուղատնտեսության մեջ փոքրամասնությունների աջակցելու առումով և չի ներառում գյուղատնտեսության աջակցության բովանդակային մասը: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ սա՝ ոլորտը ազգային փոքրամասնությունների մարտահրավերների տեսանկյունից գնահատելու և քաղաքական օրակարգ մտցնելու առաջին փորձն է:

Միջազգային իրավական շրջանակ

Նախքան գյուղատնտեսության մեջ փոքրամասնությունների կարիքներն ու մարտահրավերները քննարկելը, կարևոր է նշել միջազգային իրավական լծակները, որոնք առկա են հողի և ջրի օգտագործման իրավունքների հետ կապված:

Հարկ է նշել, որ հաճախ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ապրուստի միակ միջոցը հողագործությունն ու անասնապահությունն է, ուստի կարևոր է գտնել այն իրավական կարգավորումը, որով հողի համախմբման հարցում փոքրամասնությունների ներկայացուցիչները նույնպես կհամարվեն որպես իրավական սուբյեկտներ: Այս առումով արդիական է Միավորված ազգերի կազմակերպության հռչակագիրը գյուղացիների և գյուղական վայրերում աշխատող մարդկանց մասին, որի առարկան այն անհատներն են, ովքեր անհատապես կամ համայնքում միավորվելու միջոցով ներգրավված են փոքրածավալ գյուղատնտեսական արտադրությունում և ովքեր կոնկրետ հողի հանդեպ հատուկ կապվածություն են զգում:¹³

Քանի որ փաստ է, որ ֆերմերների եկամտի հիմնական և հաճախ միակ աղբյուրը կապված է հողագործության հետ, ապա հայտարարագիրը, կախված դրա նպատակներից, հատկապես կամրապնդի հողի իրավունքի խնդիրները, մասնավորապես, 17-րդ հոդվածի 1-ին մասով. «Գյուղացիները և գյուղական վայրերում ապրող այլ մարդիկ, ինչպես անհատապես, այնպես էլ հավաքականորեն, հողի հասանելիության իրավունք ունեն, որպեսզի կարողանան ապրել համարժեք կենսամակարդակի համաձայն»:¹⁴ Միանշանակ է, որ տերմինը. «Ապրել համարժեք կենսամակարդակի համաձայն» իր բովանդակության մեջ ներառում է հավասարապես բաշխված հողերից ստացված ռեսուրսների օգտագործման հնարավորությունը, որն

¹³ United Nations Declaration on the Rights of Peasants and Other People Working in Rural Areas, Article 1 (1), հասանելի է՝ <https://www.geneva-academy.ch/joomla-tools-files/docman/8888/files/UN%20Declaration%20on%20the%20rights%20of%20peasants.pdf>

¹⁴ Նույն, 17-րդ հոդվածի 1-ին մաս:

անվերապահորեն կապված է գյուղական բնակավայրերում ապրող գյուղացիների կենսամակարդակի բարելավման հետ:

Մյուս կողմից, որպեսզի ֆերմերները հողօգտագործման իրավունք ունենան, պետությունը պարտավոր է ստեղծել ներառական, անհատականացված իրավական կարգավորում, որը մի կողմից կհեշտացնի գյուղացիների համար հողի օրինականացումը և կապահովի հողի օրինական ճանաչումը, իսկ մյուս կողմից՝ կարգելվի ֆերմերների կողմից հողի օգտագործման անօրինական միջամտությունը:¹⁵ Որպես այդ նպատակներին հասնելու արդյունավետ ուղիներից մեկը՝ հռչակագրում նշվում է ընդհանուր, կոլեկտիվ տնօրինման և օգտագործման հողերի առկայությունը, որոնց կառավարման և բաշխման համակարգերը պետության կողմից պետք է սահմանվեն օրենքով:

Բացի այդ, ուշագրավ է, որ գյուղացիները և գյուղական վայրերում աշխատող այլ անձինք օրինական իրավունք ունեն պաշտպանվել այն հողերի բնագրավումից և օտարումից, որը հնարավոր է նրանց օրինական սեփականությունը չի հանդիսանում, սակայն դա նրանց մշտական բնակության վայրն է և օգտագործվում է գործունեության և կենցաղային պայմաններից օգտվելու համար:¹⁶

Անհրաժեշտության դեպքում, որպես գյուղացիների իրավունքների պաշտպանության լրացուցիչ իրավական լծակներից մեկը, նախատեսվում է նրանց մասնագիտացված առաջնահերթություն տալու մեխանիզմը, որը սահմանում է, որ *«Պետական հողերի օտարման ժամանակ առաջնահերթությունը պետք է տրվի հող չունեցող գյուղացիներին»:*¹⁷ Նշված դրույթն իր բովանդակությամբ ներկայացնում է գյուղացիների իրավական պաշտպանության կարևոր մեխանիզմ և միևնույն ժամանակ ուշադրություն է հրավիրում հողի և սեփականության սոցիալական բնույթի վրա:

Հողերի արդարացի համախմբման իրավական նախադրյալներից է հողերի ոչ խտրական բաշխումը փոքր հողատարածքներ ունեցող բնակավայրերում, որի համար, ըստ հայտարարագրի, պատասխանատու դերակատարը հենց պետությունն է, քանի որ ըստ հայտարարագրի 17-րդ հոդվածի. *«Պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները հողի իրավունքների հետ կապված խտրականությունը վերացնելու համար»:*¹⁸

Մյուս կողմից, ազգային փոքրամասնություններ ներկայացնող գյուղացիների պետական աճուրդների և ծառայությունների մասին իրազեկվածության բացակայությունը անվերապահորեն կապված է հողի իրավունքների հետ կապված խտրականության հետ: Ոչ դոմինանտ էթնիկ խմբերով բնակեցված շրջանների ֆերմերները հաճախ անհանգստանում են հողերի անհավասար բաշխմամբ, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ հողի վրա աշխատող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները պետության կողմից նախատեսված ծրագրերի և ծառայությունների մասին տեղեկության չունեն, ինչը, իր հերթին, հակասում է միջազգային իրավունքով նախատեսված կարգավորմանը, այնքանով, որ

¹⁵ Նույն. 17-րդ հոդված, 3-րդ մաս:

¹⁶ Նույն. 17-րդ հոդված, 4-րդ մաս:

¹⁷ Նույն. 17-րդ հոդված, 6-րդ մաս:

¹⁸ Նույն. 17-րդ հոդված, 2-րդ մաս:

պետությունը օրենքով սահմանված պարտավորություն ունի ապահովել գյուղացիների պատշաճ և ժամանակին տեղեկացվածությունը համապատասխան հարցերի վերաբերյալ՝ նրանց և նրանց մշակույթի համար հասկանալի լեզվով, ձևով և մեթոդներով, նպաստելու նրանց արդյունավետ մասնակցությանը և ներգրավվածությանը այն հիմնական խնդիրների լուծմանը, որոնք ապագայում կարող են ազդել նրանց կենսապայմանների վրա:¹⁹ Հետևաբար, պարզ է պետության անտարբերությունը հողերի բաժանման և վերաբաշխման գործընթացում լեզվական արգելքի պատճառով էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ գյուղացիների առջև ծառայած դժվարությունների նկատմամբ: Նշենք, որ Վրաստանը վավերացրել է ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան, հետևաբար պարտավոր է, որ էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում իրական անհրաժեշտության դեպքում վարչական մարմինները կիրառեն փոքրամասնությունների լեզուները,²⁰ որը տրամաբանորեն, պետք է վերաբերի փոքրամասնություններին պատկանող գյուղացիներին՝ նրանց կողմից օգտագործվող հողերի աճուրդի ձևով օտարման դեպքերում: Այսպիսով, հողերի հայտարարված աճուրդների մասին ֆերմերների անտեղյակությունը, լեզվական արգելքը և պետության ոչ ներառական քաղաքականությունը ուղղակիորեն կապված են ֆերմերների կենսապայմանների և իրավական կարգավիճակի վատթարացման հետ:

Հողերի արդարացի համախմբումը քննարկելիս կարևոր է հարցը դիտարկել հողի սոցիալական նշանակության և նպատակի ավելի լայն տեսանկյունից: Այս մասին է մատնանշվում է հողերի, ձկնորսության և անտառների սեփականության պատասխանատվության միջազգային ուղեցույցում, ըստ որի՝ պետությանը պատկանող հողերն ու ջրային ռեսուրսները պետք է օգտագործվեն հաշվի առնելով սոցիալական լայն նպատակն ու համատեքստը, որի ամենաարդյունավետ միջոցը պետության կողմից կոլեկտիվ օգտագործման և կառավարման համակարգերի ստեղծումն է:²¹ Դրա հետ մեկտեղ, նախքան հանրային հողը օտարելը, պետությունը պետք է հաշվի առնի հողի նպատակը և դերը տեղական համայնքների և անհատների գոյության գործում: Ըստ այդմ, պետությունը ոչ պետական դերակատարների հետ միասին պետք է հասկանա այս կամ այն հողի և բնական ռեսուրսների կարևորությունը այս կամ այն համայնքի համար:²²

Հարկ է նշել, որ հողերի արդար բաշխմանը զուգընթաց, գյուղատնտեսության գործընթացում կարևորագույն նախապայմաններից է գյուղացիների համար ռոռզման ջրի հասանելիությունը, որը շարունակում է մնալ սուր խնդիր ազգային փոքրամասնությունների ֆերմերների համար: Քանի որ ռոռզման ջրի դերը կենսական է ագրոնոմիայի և հողագործության համար, անհրաժեշտ է առանձին սահմանել, թե որն է պետության իրավական պարտավորությունը ռոռզման ջրի առկայության առումով: Գյուղացիների մասին հոչակագրի համաձայն՝

19 Նույն. 11-րդ հոդվածի 2-րդ մաս:

20 Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա, 11-րդ հոդվածի 2-րդ մաս, հասանելի է՝ <https://www.matsne.gov.ge/ka/document/view/1244853?publication=0>

21 Food and Agriculture Organization of the United Nations, Voluntary Guidelines on the responsible Governance of Tenure on Land, Fisheries and Forests in the Context on National Food Security, Article 8.1, հասանելի է՝ <https://www.fao.org/3/i2801e/i2801e.pdf>

22 Նույն. Article 9.1 և 9.2

«Գյուղացիները և գյուղական վայրերում աշխատող մարդիկ իրավունք ունեն օգտվելու խմելու և ոռոգման ջրից, քանի որ ջուրը արժանապատիվ կյանքի անհրաժեշտ նախապայման է»:²³

Հոչակագիրը արգելում է ցանկացած տեսակի խտրականություն ջրի բաշխման գործընթացում: Պարադոքսալ է, որ ջրի ամենասուր կարիք ունեցողները, ներառյալ ամենախոցելի խմբերը, ինչպիսիք են քոչվոր անասնապահները և արտերում աշխատող ֆերմերները, խտրականության են ենթարկվում ջրի հատկացման հարցում: Հետևաբար, հոչակագիրը միտումնավոր առանձնացրել է թիրախային խումբ՝ առանձին վերապահումով, որ. *«Պետությունները պարտավոր են ապահովել, մասնավորապես, խոցելի և մարզինալացված խմբերի, այդ թվում՝ քոչվոր հովիվների, պլանտացիաներում աշխատող գյուղացիների և աշխատանքային միգրանտների անվերապահ հասանելիությունը ինչպես ոռոգման, այնպես էլ խմելու ջրին»:*²⁴ Բացի այդ, հաստատված է, որ ջրային ռեսուրսների կոմերցիալիզացիան անթույլատրելի է, այն դեպքում, երբ երկիրը կանգնած է ջրի անհավասար բաշխման մարտահրավերի առաջ:²⁵

Խնդրի արդիականությունը և հողի և բնական ռեսուրսների արդար միավորման կարևորությունը ավելի լավ տեսնելու համար անհրաժեշտ է նշել, որ ՄԱԿ-ի 2030 թվականի օրակարգում հիմնական նպատակներից մեկը սահմանվել է հենց բնական ռեսուրսների, հողի և ջրի հավասար հասանելիությունը:²⁶ Հատուկ ուշադրություն է դարձվել գյուղատնտեսությամբ զբաղվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ֆերմերների արտադրողականությունը կրկնապատկելու նպատակին: Այս նպատակին հասնելու արդյունավետ միջոցներ են ճանաչվել տեղական համայնքի համար հողերի արդար հասանելիությունը, տեղեկացվածությունը և լրացուցիչ ֆինանսական օգուտները:²⁷

Այսպիսով, երբ միջազգային իրավական մեխանիզմներն ու ինստիտուտները ավելի ու ավելի են կենտրոնանում հողերի և այլ բնական ռեսուրսների արդարացի միավորման կարևորության վրա, չափազանց կարևոր է, որ պետությունն ավելին շատ աջակցի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ գյուղացիներին՝ իրենց առջև ծառայած մարտահրավերներին և խոչընդոտներին դիմակայելու համար:

Հետազոտության բացահայտումներ

Ներառականության քաղաքականություն՝ ծառայությունների և ծրագրերի իրականացման մեջ

Ինչպես գրասենյակային հետազոտությունը և Գյուղի զարգացման գործակալությունից պահանջված հանրային տեղեկությունը, այնպես էլ ֆերմերների/գյուղացիների հետ անցկացված հարցազրույցները ցույց են տալիս, որ էթնիկ փոքրամասնությունները հիմնականում չեն օգտվում գյուղատնտեսական խոշոր ծրագրերից և նախագծերից: Համաձայն

²³ United Nations Declaration on the Rights of Peasants and Other People Working in Rural Areas, Article 21.1

²⁴ Նույն. 21-րդ հոդվածի 3-րդ մաս:

²⁵ Նույն:

²⁶ UNITED NATIONS, THE 2030 AGENDA FOR SUSTAINABLE DEVELOPMENT, Goal 1.4, հասանելի է՝ <https://sustainabledevelopment.un.org/content/documents/21252030%20Agenda%20for%20Sustainable%20Development%20web.pdf>

²⁷ Նույն. Goal 2.3

2022 թվականին Սոցիալական հետազոտությունների և վերլուծության ինստիտուտի կողմից պատրաստված էթնիկ փոքրամասնությունների սոցիալական բացառման (օտարացման) ուսումնասիրության՝ էթնիկ փոքրամասնությունները և/կամ նրանց ընտանիքի անդամները շատ դեպքերում, չեն օգտվել պետության կողմից առաջարկվող ծրագրերից/նախագծերից:

Մասնավորապես, հարցվողները չեն մասնակցել հետևյալ ծրագրերին/նախագծերին՝ «Արտադրի՛ր Վրաստանում» պետական ծրագիր (85.2%), «Սերմանի՛ր ապագան» ծրագիր (89.6%), գյուղատնտեսության ապահովագրության ծրագիր (90%), արտոնյալ ագրովարկեր ծրագիր (80.8%), կաթնամթերքի արդյունաբերության արդիականացում և շուկա մուտք գործելու ծրագիր (91.1%), ֆերմերային տնտեսությունների/ֆերմերների գրանցման նախագիծ (89%): Հարցվածները չնչին ակտիվություն են հայտնում երկու նախագծերիմասով՝ արտոնյալ ագրովարկեր (8,5%) և «Արտադրի՛ր Վրաստանում» պետական ծրագիր (5,2%):²⁸

Գյուղի զարգացման գործակալությունից ստացված հանրային տեղեկությունը թույլ չի տալիս ուղղակիորեն հաշվարկել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության մակարդակը պետական ծրագրերում և նախագծերում: Սակայն այս տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, թե ինչպես են այդ ծրագրերն ու նախագծերը բաշխված ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջաններում: Հարկ է նշել, որ մի շարք ծրագրեր և նախագծեր, հավասարապես են իրականացվում տարբեր շրջաններում, այդ թվում՝ փոքրամասնություններով բնակեցված շրջաններում:

Օրինակ՝ Վրաստանում ագրոապահովագրության ծրագրի շահառուների (35 586 շահառու) մոտ 10 տոկոսը բաժին է հասնում Ջավախեթիին և Քվեմո Քարթլիին (3302 շահառու): Նաև արտոնյալ ագրովարկերի ծրագրերի շահառուների ընդհանուր թվի (18194) ավելի քան 15 տոկոսը նույնպես բաժին է հասնում Ջավախեթիին և Քվեմո Քարթլիին: Այնուամենայնիվ, ավելի էական և մեծ նախագծերի դեպքում փոքրամասնություններով բնակեցված շրջանների աջակցությունը գրեթե միշտ 10 տոկոսից ցածր է: Օրինակ, «Վերամշակող և պահեստավորող ձեռնարկությունների համաֆինանսավորման ծրագրի» ընդհանուր թվից (128 շահառու) ընդամենը 13 ծրագիր է իրականացվում փոքրամասնությունների շրջաններում, բայց ոչ՝ Ախալքալաքի, Նինոծմինդայի, Մաոնեուլիի կամ Դմանիսիի մունիցիպալիտետներում: Հետաքրքիր է, որ 13 ձեռնարկություններից 9-ը բացվել է Գարդաբանիի մունիցիպալիտետում, որտեղ էթնիկ փոքրամասնությունների տեսակարար կշիռը 50%-ից պակաս է, իսկ 2 ձեռնարկություն բացվել է Ախալցխի մունիցիպալիտետում, որտեղ նույնպես փոքրամասնությունների ընդհանուր թիվը կազմում է 35%: Ինչպես նաև, «Գյուղատնտեսական արտադրության խթանման պետական ծրագրի» և «Գյուղատնտեսության մեքենայացման համաֆինանսավորման պետական ծրագրի» դեպքում փոքրամասնություններով բնակեցված շրջանների աջակցությունը նշանակալից ցածր է 10 տոկոսից:

²⁸ Սոցիալական հետազոտությունների և վերլուծության ինստիտուտ, էթնիկ փոքրամասնությունների սոցիալական բացառման (օտարացման) հետազոտություն, 2022 թ, Թբիլիսի

Բնակչության հետ անցկացված հարցազրույցների ժամանակ գրեթե բոլոր մասնակիցները նշել են, որ տեղեկություն չունեն պետության կողմից նախատեսվող ծրագրերի և ծառայությունների մասին: Բնակչությունը հաճախ չգիտի խորհրդատվական կենտրոնների գտնվելու վայրը և ծանոթ չէ դրանց գործունեությանը: Հարկ է նշել, որ ոչ դոմինանտ էթնիկ խմբերի ֆերմերներին հասանելի են այնպիսի ունիվերսալ ծրագրեր, ինչպիսիք են անվճար վառելիքը, փոքր ֆերմերների ֆինանսական աջակցությունը: Սակայն, ըստ բնակչության, նրանց անհայտ են այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են «Սերմանի՛ր ապագան», կոոպերատիվների աջակցությունը, վերամշակող և պահեստավորման ձեռնարկությունների համաֆինանսավորումը և այլ նախագծերի մասին տեղեկությունները: Այստեղ պետք է ասել, որ ագրոապահովագրության և արտոնյալ ագրովարկերի ծրագրերը հայտնի են բնակչությանը, թեև հաճախ նրանք ձեռնպահ են մնում այդ ծառայություններից օգտվելուց:

«Ես չգիտեմ՝ ուր գնամ, եթե ինչ-որ տեղեկության կարիք ունեմ: Չգիտեմ ում դիմեմ, պետությունը մեզ տեղեկություն չի տալիս» (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ Բոլնիսիից, 49 տարեկան):

«Մեզ օգնում են, բայց ծրագրերը շատ քիչ են, դիզելային վառելիք են տվել, քարտ են տվել, բայց կարծես այնքան են տալիս, որ մենք լրիվ չընկնենք ու չհրաժարվենք այս գործից: Մինչդեռ, Բոլնիսին ամենահարուստ մունիցիպալիտետն է» (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ Բոլնիսիից, 67 տարեկան):

«Լսել եմ գյուղատնտեսության ապահովագրության ծրագրի մասին, բայց չեմ օգտվում, քանի որ ապահովագրելու համար չունեմ բավարար գումար և բերք» (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ Բոլնիսիից, 49 տարեկան):

Գյուղատնտեսության փորձագետների կարծիքով, պետությունը չի օգտագործում բազմազանության և ներառականության ռազմավարական սեփական քաղաքականությունն ու ծրագրերը պլանավորելիս: Որոշ փորձագետներ կարծում են, որ սա հիմնավոր մոտեցում է, և գյուղատնտեսության մեջ հիմնական ելակետը պետք է լինեն գյուղատնտեսական խնդիրները, այլ ոչ թե այլ գործոններ: Սակայն, մի շարք փորձագետների կարծիքով, փոքրամասնությունների հատուկ վիճակի վրա կենտրոնանալը և քաղաքականությունը պլանավորելիս նրանց կարիքները հաշվի առնելը կարող է ավելի արդյունավետ լինել այս խմբերի արտադրողականության բարձրացման համար:

«Չի երևում, որ մտածվել է բազմազանության մասին, նախարարության համար կարևորը ոչ թե անհատներին, այլ ոլորտին օգնելն է: Չեն մտածել, թե որ ոլորտով որ շրջանի վրա են դուրս գալու: Կոնկրետ մշակույթին է հետևում օգնությունը, քան որևէ այլ բան» (խորացված հարցազրույց փորձագետի հետ, հարցազրույց N2):

«Արդեն 13-14 տարի է, ինչ աշխատում եմ այս ոլորտում: Դժվար է ունենալ միայն փոքրամասնություններին ուղղված ծրագրեր: Բայց եթե ծրագիրը տարածաշրջանային է կամ արտադրանքի վրա հիմնված, ապա եթե խոսքը կարտոֆիլի մասին է, չի կարելի

Էթնիկ հայերին բաց թողնել, կամ եթե Քվեմո Քարթլիում աշխատում ես լուրիկի վրա և չես ընդգրկում փոքրամասնություններին, ապա դա օրենքի խախտում կլինի» (խորացված հարցազրույց փորձագետի հետ, հարցազրույց N3):

Հարցին, թե ինչպես են որոշումներ կայացվում այս կամ այն ծրագրի աջակցության կամ ֆինանսավորման վերաբերյալ, որոշ փորձագետներ քննադատական կարծիքներ ունեն: Ըստ նրանց՝ երեք հիմնական գործոն կա, որոնց հիման վրա ֆինանսավորվում է այս կամ այն ոլորտը: Առաջնային գործոնը ավանդական և պատմական մշակաբույսերն են, ինչպիսիք են խաղողը, ցիտրուսը և վերջերս՝ վրացական թեյը: Երկրորդ, հաճախ պետական աջակցության ծրագրերի հիմքում դրվում է արտահանումն ավելացնելու ցանկությունը, թեև համեմատաբար թույլ է կենտրոնացումը ներմուծման կրճատմանը: Երրորդ գործոնը հասարակական կարծիքն է և այսպես կոչված PR-ը: Միևնույն ժամանակ, գրեթե բոլոր փորձագետները նշում են, որ իրական հետազոտություններ չկան, որոնց վրա հիմնված կլինեն ծրագրերն ու խթանող նախագծերը, ինչը շարունակում է մնալ էական մարտահրավեր գյուղատնտեսական համակարգում:

«Ծրագրերն ու ծառայությունները ստեղծվում են ըստ կարիքների: Հաշվի առնելով կլիման, հողը, շրջակա միջավայրը և այն, ինչը կարող է հաջողակ լինել Վրաստանում: Պաշտոնական ուսումնասիրություններ չկան կամ ես չեմ հանդիպել, բայց այդ ամենը պլանավորվում է ոլորտից: Միևնույն ժամանակ շեշտը հիմնականում դրված է արտահանվող ապրանքի վրա» (խորացված հարցազրույց փորձագետի հետ, հարցազրույց N2):

«Օրինակ՝ գինին պատմականորեն ֆինանսավորվել է, ցիտրուսները, թեյը եղել են Խորհրդային Միությունում: Դրա համար էլ շարունակում են ֆինանսավորել: Այս ամենը համարվում է վրացական ավանդական արտադրություն, ուստի մենք աջակցում ենք դրան: Այս ամենում հաշվի է առնվում նաև արտահանման ներուժը (խորացված հարցազրույց փորձագետի հետ, հարցազրույց N1):

Կան ծրագրեր, որոնք անհեռանկարային են, բայց իրականացվում են PR-ի տեսանկյունից, օրինակ՝ վրացական թեյի ծրագիրը անհաջող ծրագիր է, բայց միևնույն է օգնում են (խորացված հարցազրույց փորձագետի հետ, հարցազրույց N5):

Բացի այդ, ըստ փորձագետների, փոքրամասնություններին ընդգրկելը ծրագրերում և ծառայություններում նույնպես պահանջում է աշխատանք վստահության և կապերի ձևավորման ուղղությամբ, քանի որ ոչ դոմինանտ խմբերը հաճախ չեն հավատում, որ նման աջակցության ծրագրերը կարող են հասանելի լինել իրենց:

«Մրցույթի նկատմամբ ցածր վստահություն է ի հայտ գալիս: Մարդիկ կարծում են, որ իրենց միևնույն է չեն ֆինանսավորի: Սա կարող է ազդեցություն ունենալ: Իմ ունեցած փորձով, այն՝ ժամանակին, զգալի ազդեցություն էր թողնում» (խորացված հարցազրույց փորձագետի հետ, հարցազրույց N5):

Գյուղի զարգացման գործակալության ներկայացուցիչների խոսքով՝ բոլոր ծառայություններն ու ծրագրերը ծրագրվում են հաշվի առնելով տեղական կարիքները և իրականացվում են գերատեսչությունների կողմից: Բացի այդ, նրանք նշում են, որ փոքրամասնություններին պետական լեզուն սովորեցնելու անհրաժեշտություն կա, որպեսզի նրանք կարողանան օգտվել գյուղատնտեսական ծրագրերից:

«Առանձին բաղադրիչ չունենք ազգային փոքրամասնությունների համար, բայց ամեն ինչ բաց է և հասանելի բոլորի համար: Մենք ունեինք ծրագիր երիտասարդների և կանանց համար, բայց ոչ էթնիկ փոքրամասնությունների» (հարցազրույց Գյուղի զարգացման գործակալության ներկայացուցիչների հետ):

Հատկանշական է, որ գործակալության ներկայացուցիչները նշում են, որ գործակալությունը իր գործունեության վերաբերյալ պարբերաբար տեղեկատվական արշավներ է իրականացնում նաև փոքրամասնություններով բնակեցված շրջաններում: Մակայն, անհրաժեշտ է աջակցել տեղական ինքնակառավարման մարմիններին, քանի որ գործակալությունը չունի բավարար ռեսուրսներ:

«Տեղեկության տարածման գործընթացում ինքնակառավարումը շատ ռեսուրսներ ունի, և նրանք պետք է մեզ օգնեն: Մենք ռեսուրս չունենք, քանի որ քիչ ենք, և քաղաքապետի ներկայացուցիչները պետք է մեզ օգնեն» (հարցազրույց Գյուղի զարգացման գործակալության ներկայացուցիչների հետ):

Դրա հետ մեկտեղ, ըստ գործակալության աշխատակիցների, բնակչության հետ հանդիպումները վրաց լեզուն սովորելու լրացուցիչ դրդապատճառ է, որոնց ընթացքում նրանք բնակչության հետ կիսվում են առկա ծրագրերի մասին, որոնցից կկարողանան օգտվել վրաց լեզվին տիրապետելու դեպքում:

«Այս հանդիպումներն անցկացվում են լեզուն սովորելու համար: Որպեսզի իմանան, որ ծառայություններ կան, և էթե վրացերեն սովորեն, ապա կօգտվեն այդ ծառայություններից» (հարցազրույց Գյուղի զարգացման գործակալության ներկայացուցիչների հետ):

Մունիցիպալիտետներում առկա գյուղատնտեսական խորհրդատվական կենտրոնների աշխատակիցների խոսքով, ակտիվորեն հանդիպումներ են անցկացնում գյուղաբնակ բնակչության հետ և ծանոթացնում են գործող ծրագրերի ու ծառայությունների հետ: Մակայն, ըստ նրանց, փոքրամասնության ներկայացուցիչ գյուղացիները/Ֆերմերները հաճախ դիմադրում են նորարարություններին և շարունակում են աշխատել ավանդական մեթոդներով և մոտեցումներով:

«Եթե իրենց ծնողները կարտոֆիլ են ցանել, իրենք էլ են կարտոֆիլ ցանում և ոչինչ չեն փոխում: Մեզ էլ չեն լսում» (Մառնեուլիի խորհրդատվական կենտրոնի աշխատակից):

Խորհրդատվական կենտրոնների աշխատակիցները նշում են, որ իրենց հիմնական գործունեությունը վիճակագրություն պատրաստելն է և կենտրոն հասցնելը, սակայն էթնիկ նշիչներով վիճակագրություն չեն անում: Կենտրոնի աշխատակիցների շրջանում կան նաև

կարծրատիպային վերաբերմունք փոքրամասնության ներկայացուցիչ գյուղացիների/ֆերմերների նկատմամբ: Ուժեղ են այնպիսի կարծիքները, ինչպիսիք են «փոքրամասնությունները ամենալավ հողն ունեն», «նրանք ավելի հարուստ են» և այլն:

Ավելի ծանր իրավիճակ է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց կարիքների առումով: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) զեկույցում՝ «Գենդեր, գյուղատնտեսություն և գյուղի զարգացում», նշվում է, որ փոքր ընտանեկան ֆերմերային տնտեսությունում ինքնազբաղված կանանց 59%-ի աշխատանքը մնում է չվարձատրվող:²⁹ Քվեմո Քարթլիում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց մասնաբաժինը գյուղատնտեսության մեջ ամենաբարձրն է տղամարդկանց համեմատ:³⁰ Սակայն, ինչպես ողջ Վրաստանում, այնպես էլ էթնիկ փոքրամասնություններով բնակեցված շրջաններում, կանանց հողի սեփականություն ունենալու մակարդակը զգալիորեն ցածր է տղամարդկանց ցուցանիշից:³¹ Կանանց մոտ բարձր է ժամանակային աղքատության մակարդակը: Շրջաններում, հատկապես էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակեցված գյուղերում, ենթակառուցվածքների բացակայության պատճառով, կանայք ստիպված են շատ ավելի շատ ժամանակ հատկացնել տնային գործերին: Այն պայմաններում, երբ տնային աշխատանքի բեռը ընկնում է կանանց վրա (ըստ ՄԱԿ-ի Կանանց ծրագրի կողմից պատրաստված նոր հետազոտության, կանայք շաբաթական մոտ 38,4 ժամ են ծախսում չվճարվող աշխատանքի համար, իսկ տղամարդիկ՝ 11,5 ժամ: Բացի այդ, կանանց 98,3 տոկոսը և տղամարդկանց 70,2 տոկոսը մասնակցում է չվարձատրվող աշխատանքին)³², տնային տնտեսությունում կանանց մեծ ծանրաբեռնվածությունը կրկնակի դժվարացնում է նրանց կյանքը:

Չնայած երկրում հայտարարված գենդերային զգայուն քաղաքականությանը, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց կարիքների վրա հատուկ ուշադրությունը բացահայտորեն տեսանելի չէ պետության քաղաքականության մեջ: Պետք է դրական գնահատել Գյուղի զարգացման գործակալության կողմից UN Women-ի հետ համատեղ մեկնարկված կանանց համար նախատեսված պիլոտային ծրագրերից մեկը, որն իրականացվում է Մառնեուլիի և Լագոդեխիի մունիցիպալիտետներում և նպատակ ունի աջակցել կանանց՝ ջերմոցների ստեղծման հարցում:³³ UN women-ի աջակցությամբ, 2020 թվականին հետազոտողների թիմը գնահատել է Գյուղի զարգացման գործակալության՝ «Սերմանի՛ր ապագան» ծրագրի գենդերային ազդեցությունը, որը պարզել է (1) գենդերային դերերն ու կարծրատիպերը, (2) ռեսուրսների անհավասար հասանելիությունը, (3)

²⁹ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO). Գենդեր, գյուղատնտեսություն և գյուղի զարգացում: Երկրի գենդերային գնահատման շարք. Հոմ. 2018 թվական:

³⁰ «Սերմանի՛ր ապագան» պետական ծրագրի գենդերային ազդեցության գնահատում <https://georgia.unwomen.org/sites/default/files/2022-11/Danerge%20Momavali%20Geo.pdf>

³¹ Smallholders and family farms in Georgia <https://www.fao.org/3/ca9822en/CA9822EN.pdf>

³² ՄԱԿ-ի կանանց կազմակերպություն, Հոգ տանելու ժամանակն է՝ կանանց չվճարվող աշխատանքը և անհավասարության ճգնաժամը Վրաստանում, 2022: Հասանելի է՝

<https://georgia.unwomen.org/sites/default/files/2022-12/GTUS%20thematic%20brief%20GEO%20for%20web%20%283%29.pdf>

³³ Պիլոտային ծրագիր կանանց համար <https://rda.gov.ge/programs/women-pilot-program/27cb55d4-2788-4db5-8bde-92c03b842aef>

թրեյնինգների և գիտելիքների հասանելիությունը, (4) տվյալների հետ կապված սահմանափակումները և առկա տվյալների գենդերային տեսանկյունից վերլուծության բացակայությունը:³⁴ Այս մարտահրավերները ընդհանուր են էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց համար, որին ավելանում է ևս մեկ խնդիր՝ պետական լեզվի քաղաքականությունը, որն էլ ավելի է վանում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց մասնակցել նման ծրագրերին:

Լեզվի քաղաքականություն փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ

Սոցիալական հետազոտությունների և վերլուծության ինստիտուտի 2022 թվականի հետազոտությունը ցույց է տալիս, որ լեզվի իմացությունը շարունակում է մարտահրավեր մնալ էթնիկ փոքրամասնությունների համար:

63%-ը վատ կամ շատ վատ է ճանաչում վրացական տառերը և կարդում բառեր: Վրաստանում ապրող էթնիկ փոքրամասնությունների 60%-ը, իրենց իսկ գնահատմամբ, կարող է շատ վատ կամ վատ շփվել վրացերեն խոսող մարդու հետ, իսկ ավելի մեծ մասը (84%) կարող է շատ վատ, կամ վատ կարդալ վրացական գրականություն և հասկանալ տեքստի բովանդակությունը: Պարզվել է, որ հարցվածների տարիքն ազդում է վրաց լեզվի իմացության որակի վրա. տարիքի աճին զուգահեռ նվազում է վրացերենին լավ տիրապետողների թիվը:

Ոչ դոմինանտ էթնիկ խմբերը ներկայացնող գյուղացիների/ֆերմերների համար տեղեկատվության պակասի հիմնական պատճառը, բնակչությունն ու փորձագետների մի մասը, փոքրամասնությունների համար հասկանալի լեզվով տեղեկատվության բացակայությունն են նշում: Հարցված գրեթե բոլոր ֆերմերները/գյուղացիները նշում են, որ լեզվի չիմացությունը իրենց համար կարևոր խոչընդոտ է ոչ միայն գյուղատնտեսական ծրագրերից օգտվելու, այլ նաև այլ գերատեսչությունների հետ շփվելու գործընթացում: Նրանք չեն կարողանում հաղորդակցվել խորհրդատվական կենտրոնների աշխատակիցների հետ, չեն կարողանում օգտվել Գյուղի զարգացման գործակալության կայքից և հաճախ գրանցված չեն my.mepa.gov.ge պորտալում: Սա կայք է, որտեղ ֆերմերները/գյուղացիները գրանցման հիման վրա հնարավորություն ունեն մասնակցելու պետական աջակցության ծրագրերին և արտոնություններ ստանալ: Այստեղ պետք է նշել, որ չնայած փոքրամասնության ներկայացուցիչ ֆերմերները չեն կարողանում գրանցվել նշված պորտալում, հաճախ բանկի աշխատակիցները, պետական ծառայողները և այլ անձինք են ֆերմերներին գրանցում այս պորտալում:

³⁴ «Մերմանի՛ր ապագան» պետական ծրագրի գենդերային ազդեցության գնահատում <https://georgia.unwomen.org/sites/default/files/2022-11/Danerge%20Momavali%20Geo.pdf>

Պետք է հաշվի առնել նաև գյուղատնտեսությամբ զբաղվող մարդկանց տարիքային պատկերը: Ընտանեկան տնտեսությունների բաշխումն ըստ ֆերմերի տարիքի ցույց է տալիս, որ մինչև 35 տարեկան ֆերմերները (38 090 մարդ) կազմում են ընդհանուր թվի 6 տոկոսը (639 963 մարդ): Հիմնական ակտիվությունը նկատվում է 35-64 տարեկան տարիքային խմբում, որը կազմում է ընդհանուր թվի 59 տոկոսը (377 588 մարդ): 65 տարեկանից բարձր ֆերմերների բաժինը կազմում է 35 տոկոս (224 285 մարդ):

Դրա հետ մեկտեղ, լեզվի քաղաքականությունը տարբեր շրջաններում տարբեր ձևով է իրականացվում: Ի տարբերություն Քվեմո Քարթլիի, Ջավախեթիում տեղեկությունը բանավոր է տրամադրվում ոչ դոմինանտ էթնիկ խմբերին, այդ թվում՝ հայերենով: Սակայն գրավոր հաղորդակցությունը միայն վրացերենով է տեղի ունենում:

«Չէի ասի, որ բանավոր հաղորդակցության ժամանակ թարգմանության խնդիր կա, խոսում են մեզ հասկանալի լեզվով: Տեղի գործակալության աշխատակիցները հայեր են, նրանց հետ հաղորդակցվելը խնդիր չէ: Խնդիրն այն է, որ գրականությունը, դրամաշնորհային մրցույթը միայն վրացերենով է հասանելի»: (Հարցազրույց ֆերմերի հետ Նինոծմինդայից, 62 տարեկան):

Գյուղատնտեսական որոշ փորձագետների կարծիքով, կարևոր է նաև փոքրամասնությունների լեզուներով առկա ծառայությունների մասին տեղեկություն տրամադրելը, ինչը կավելացնի փոքրամասնությունների կողմից այդ ծրագրերին դիմելու և դրանցից օգտվելու քանակը: Մասնագետները նշում են, որ հաճախ է խոսվում ծրագրերի և ծառայությունների մասին տեղեկության թարգմանության անհրաժեշտության մասին:

«Չգիտեմ՝ նախարարությունում թարգմանված գրքույկներ էին ուզում կազմել, բայց, չեմ կարող ասել, թե որքանով ունի սա համակարգային բնույթ: (խորացված հարցազրույց փորձագետի հետ, հարցազրույց N3)

Սակայն, ըստ Գյուղի զարգացման գործակալության աշխատակիցների, փոքրամասնությունների լեզվով ծառայություններ մատուցելը կնվազեցնի այդ խմբերի վրացերեն սովորելու ցանկությունը, ինչը նրանց կարծիքով խնդրահարույց է:

«Լեզվական խոչընդոտը լուրջ խնդիր է, եթե պետությունը թարգմանի այս ամենը, բուկլետներով ու թռուցիկներով, ապա բնակչությունն այլևս վրացերեն չի սովորի» (հարցազրույց Գյուղի զարգացման գործակալության ներկայացուցիչների հետ):

Խորհրդատվական կենտրոնների աշխատակիցները կիսում են Գյուղի զարգացման գործակալության աշխատակիցների դիրքորոշումը: Բացի այդ, նրանք նշում են, որ փոքրամասնության համայնքի ֆերմերների/գյուղացիների հետ հանդիպելիս, հաճախ են որպես թարգմանիչ օգտագործում քաղաքապետի ներկայացուցիչներին, իսկ այն դեպքում, եթե գյուղի լիազորը չի տիրապետում պետական լեզվին, ստիպված են ռուսերեն օգտագործել:

Ի տարբերություն կենտրոնական գերատեսչությունների, խորհրդատվական կենտրոնների ներկայացուցիչներն ասում են, որ տեղեկատվական գրքույկների մի մասը թարգմանում են փոքրամասնությունների լեզուներով, սակայն թարգմանված նյութերը վերաբերում են միայն ագրոապահովագրության և ագրովարկային ծրագրերին, որոնք պատրաստվել են համապատասխան բանկերի և ապահովագրական կազմակերպությունների կողմից և փոխանցվել խորհրդատվական կենտրոններին և բնակչությանը:

Հատկանշական է, որ երիտասարդները գյուղատնտեսության ոլորտում զբաղվածությունն ընկալում են որպես անհեռանկար աշխատանք: Բոլնիսիից երիտասարդներից մեկի խոսքով՝ գյուղատնտեսության մեջ զբաղվածությունն արդյունավետ չէ, և հաճախ անհնար է վերադարձնել ներդրված աշխատանքի շահույթը: Այդ իսկ պատճառով երիտասարդների զգալի մասը չի զբաղվում գյուղատնտեսությամբ: Երկու շրջանում էլ երիտասարդները հաճախ մեկնում են սեզոնային աշխատանքների, իսկ այն երիտասարդները, որոնք իրենց ուսումը շարունակում են Թբիլիսիի բարձրագույն ուսումնական հաստատություններում, ընտրում են այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են խանութների խորհրդատուները, առցանց ծառայությունները (լեզուների իմացության հիման վրա) և այլն:

Գյուղատնտեսական նշանակության հողերի բաշխման հարցը

Հողերի բաշխման հարցը խնդրահարույց է ողջ Վրաստանում: Ելնելով այս խնդրի առնչությամբ գյուղատնտեսության ոլորտի մասնագետների հետ անցկացված հարցազրույցներից՝ կարելի է ասել, որ 90-ականներին իրականացված բարեփոխումները բնութագրվում էին բազմաթիվ մարտահրավերներով: Գրեթե բոլոր փորձագետները խոսում են հողերի մասնատման խնդրի մասին: Նրանց կարծիքով՝ փոքր ֆերմերները չեն կարողանում մրցակցել այլ երկրներում արտադրված արտադրանքի հետ: Հետևաբար, անհրաժեշտություն կա ընդլայնելու և համախմբելու հողերը, որտեղ միջին և միջինից մեծ ֆերմերները կարող են մրցունակ դառնալ ներմուծվող ապրանքների նկատմամբ: Փորձագետների այս կարծիքը կիսում է նաև Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարությունը:

Վրաստանի գյուղատնտեսության և գյուղի զարգացման 2021-2027 թվականների ռազմավարական փաստաթղթի համաձայն՝ Վրաստանում տնտեսությունների հիմնական մասը փոքր հողատարածքներով է: Ֆերմերների 93.7 տոկոսն ունի 2 հա-ից պակաս գյուղատնտեսական հողատարածք, իսկ 5 հա-ից ավելի հողատարածք ունի միայն միայն 1.5 տոկոսը:

Այս իրողությունը, ըստ ռազմավարության փաստաթղթի SWOT վերլուծության, Վրաստանի գյուղատնտեսության թույլ կողմն է և պահանջում է կոնկրետ քայլեր ձեռնարկել:³⁵ Տնտեսությունների կողմից օգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի

³⁵ Վրաստանի գյուղատնտեսության և գյուղի զարգացման ռազմավարություն 2021-2027
<https://mepa.gov.ge/Ge/Files/ViewFile/27243>

տարածքը ըստ հողօգտագործման ձևերի ցույց է տալիս, որ կառույցի 48 տոկոսը զբաղեցնում են վարելահողերը (377 445 հա), 38 տոկոսը՝ բնական խոտհարքերն ու արոտավայրերը (300 004 հա), իսկ 14 տոկոսը՝ բազմամյա մշակաբույսերի ցանքատարածությունները (109 567 հա):³⁶ Եթե այս տեսանկյունից դիտարկենք էթնիկ փոքրամասնություններով բնակեցված շրջաններում հողերի բաշխումը, կտեսնենք, որ գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասը գտնվում է անհատների ձեռքում, իսկ բնակչությունը հաճախ է խոսում հողերի սակավության մասին: Քվեմո Քարթլիի շրջանում տեղի ֆերմերները ստիպված են այսպես կոչված «արենդատորներից» գյուղատնտեսական հողատարածքներ վարձակալել, որպեսզի կարողանան իրենց ընտանիքը պահել ու նվազագույն եկամուտ ստանալ: Տեղացիների խոսքով, մեկ հեկտարի համար տարեկան հարկը տատանվում է 500 լարիից մինչև 1500 լարիի սահմաններում: Գյուղացիները պնդում են, որ 90-ականների հողային բարեփոխումների արդյունքում հողերի մեծ մասը հայտնվել է «արենդատորների» ձեռքում, և բնակչությունը չի կարողացել հող ստանալ:

«Հողերը բաշխված են ասիմետրիկ, քանի որ նրանք, ովքեր ազդեցություն ու սերտ կապեր են ունեցել հանձնաժողովի անդամների հետ, ստացել են ամենամեծ ու լավագույն հողակտորները: Այս ազդեցիկ անձինք, ովքեր այն ժամանակ աշխատել են պետական հատվածում, ոչ միայն հողատարածքների զգալի մասն են վերցրել, այլ նաև խորհրդային ժառանգության թողած ենթակառուցվածքներն էլ է նրանց ձեռքում (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ Նինոմիխայից, 58 տարեկան):

«Դմանիսիում գյուղերի արոտավայրերի ու խոտհարքերի զգալի մասը մեկ անձի ձեռքում է: Կախա Օքրիաշվիլիի հորն են պատկանում Դմանիսիի բոլոր հողերը: Իսկ մենք ոչինչ չունենք» (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ Դմանիսիից, 61 տարեկան):

Խորհրդային Միության փլուզումից հետո հողերի սեփականաշնորհման գործընթացն իսկապես բնութագրվում էր զգալի թերություններով: 1992 թվականի մայիսի 7-ին Գերագույն խորհրդի 10-րդ որոշման հիման վրա հողերի սեփականաշնորհման օրենքում սահմանափակում մտցվեց՝ սահմանամերձ շրջաններում 21 կմ միջանցքային հողերի սեփականաշնորհումը սահմանափակելով: Նշենք, որ այս սահմանափակումը չի տարածվել այլ շրջանների վրա՝ բացառությամբ Քվեմո Քարթլիի և Մամգիսե Ջավախեթիի շրջանների:³⁷ Քվեմո Քարթլիում նշված միջանցքում գտնվող հողատարածքները շուտով ոչ պաշտոնական հայտնվեցին Մերաբ Կոստավայի հասարակության սեփականությունում, որին վերջին տարիներին փոխարինել է Մառնեուլիի և Հուջարի թեմը: Այս մասին պաշտոնական տեղեկություն չկա, թեև բնակչության հետ զրույցում տեղացիները հաճախ են բարձրաձայնում այդ մասին: 2021 թվականին Մառնեուլիի մունիցիպալիտետի Մեորե Քեսալո գյուղում տեղի բնակիչների և Մառնեուլիի և Հուջարի թեմի առաջնորդի միջև կոնֆլիկտի ժամանակ, թեմի ներկայացուցչի խոսքով, թեմն իրավունք ուներ տնօրինել այդ հողերը (չնայած այն

³⁶ Նույն:

³⁷ Gvaramia, Alexander, 2013, Land Ownership and the Development of the Land Market in Georgia https://www.eda.admin.ch/content/dam/countries/countries-content/georgia/en/archive/resource_en_219898.pdf

հանգամանքին, որ այդ հողերը պաշտոնապես գտնվում են էկոնոմիկայի նախարարության հաշվեկշռում), իսկ էթնիկ ադրբեջանցի բնակչության հողերը գտնվում են պետական սահմանի մյուս կողմում:³⁸

Էթնիկ փոքրամասնություններով բնակեցված շրջաններում հողերի գրանցման գործընթացը դեռևս խնդրահարույց է: Դրա լավագույն օրինակը հետաքննող լրագրողների միության՝ I-Fact-ի վերջին հետազոտությունն է, ըստ որի՝ Սազարեջոյի մունիցիպալիտետի Դուզագրամ գյուղի քաղաքապետի ներկայացուցիչ Մուխթար Իսմայլովը յուրացրել է գյուղի հողերը: Ըստ I-Fact-ի լրագրողական հետաքննության՝ Իսմայլովը, չարաշահելով պաշտոնը, գրանցել է մինչև 90 հեկտար հող, որը տարիներ շարունակ եղել է գյուղի կոլեկտիվ սեփականությունը:³⁹ 2021 թվականին հարցը օրինական կերպով ուսումնասիրվել է Սոցիալական արդարության կենտրոնի կողմից, որի ընթացքում բացահայտվել են հանգամանքներ, որոնք հիմնավոր ենթադրություն են ստեղծել, որ քաղաքապետի ներկայացուցիչը Սազարեջոյի մունիցիպալիտետի Դուզագրամ գյուղում կատարել է հնարավոր հանցագործություններ, որոնք անհապաղ պահանջում են արդյունավետ հետաքննություն: Այս ամենի հիման վրա Սոցիալական արդարության կենտրոնը դիմել է Վրաստանի դատախազություն՝ այս հարցով արդյունավետ հետաքննություն անցկացնելու, համարժեք իրավական գնահատական տալու և Մուխթար Իսմայլովի լիազորությունները կասեցնելու խնդրանքով:⁴⁰

Գյուղատնտեսական հողերի գրանցման գործընթացում պետության ակտիվ ներգրավման անհրաժեշտությունը հայտնի է նաև համակարգի համար: Այդ նպատակով 2020 թվականին ստեղծվել է Հողերի կայուն զարգացման գործակալությունը, որի հիմնական իրավասություններն են՝ հողերի հաշվառումը, վիճակագրության անցկացումը, միասնական տվյալների բազայի կազմումը, հողային ռեսուրսների ռացիոնալ և նպատակային օգտագործման և պաշտպանության քաղաքականության մշակումն ու մոնիտորինգը, գյուղատնտեսական նշանակության հողերի կայուն կառավարման պետական ծրագրի քաղաքականության մշակումն ու իրականացումը, գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայի որոշումը և դրանց փոփոխության վերաբերյալ որոշումների ընդունումը, հողօգտագործման հետ կապված թեմատիկ քարտեզների պատրաստումը և այլն:⁴¹ Գործակալության լիազորություններից է պետության հաշվեկշռում գտնվող գյուղատնտեսական հողատարածքների վարձակալությունը: Գործակալությունն արդեն իրականացնում է այդ գործունեությունը, թեև տեղեկությունը հասանելի է միայն վրացերենով, ինչը, ըստ էության, անհավասար պայմաններ է ստեղծում պետական լեզվին չտիրապետող Վրաստանի քաղաքացիների համար:

³⁸ TDI Քեսալոյում էթնիկ ադրբեջանցիների հետ կոնֆլիկտի մասին <http://tdi.ge/ge/statement/tdi-kesaloshi-etnikur-azerbaijanelebtan-dapirispirebis-sheaxe>

³⁹ Դուզագրամի օլիգարխը. Ինչպե՞ս է քաղաքապետի ներկայացուցիչը յուրացրել գյուղի հողերը <https://www.ifact.ge/duzagrama/>

⁴⁰ Իոբմուղանլոյում գյուղացիների հողերի անօրինական յուրացման պրակտիկան պահանջում է ժամանակին արձագանքել <https://socialjustice.org.ge/ka/products/iormughanloshi-glekhebis-mitsebis-ukanono-mitvisebis-praktika-droul-reagirebas-itkhovs>

⁴¹ Հողի կայուն կառավարման գործակալություն՝ նոր հաստատությունը, որը ֆինանսավորվելու է 800 հազար լարիով <https://bm.ge/ka/article/miwis-mdgradi-martvis-saagento---axali-ssip-romelic-800-atasit-larit-dafinansdeba/30454>

Սագարեջոյի մունիցիպալիտետում բնակչության հետ կայացած հանդիպումների ժամանակ գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվող բնակչության զգալի մասը դժգոհություն է հայտնել արոտավայրերի վարձակալության պրակտիկայից: Նրանց խոսքով, քանի որ ֆերմերների մեծամասնությունը պետական լեզվին լիարժեք չի տիրապետում, հաճախ հարկադրված են երկրորդ և/կամ երրորդ անձանցից ավելի թանկ գնով վարձակալել հողերը, որոնք պետությունը տալիս է բնակչությանն՝ աճուրդի միջոցով:

«Մենք վրացերեն չգիտենք, ոչ էլ համակարգիչներից ենք բան հասկանում, դրա համար էլ չենք կարող մասնակցել աճուրդներին: Եվ ստիպված ենք այդ մարդկանցից ավելի թանկ գնով վարձակալել արոտավայրերը: Նրանցից, ովքեր մոտ են համակարգին և գիտեն այս ամենը» (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ՝ Սագարեջոյից, 47 տարեկան):

Պետք է ասել, որ էթնիկ աղբբեջանցի ֆերմերները, որոնք զբաղվում են անասնապահությամբ, հաճախ Ջավախեթիի արոտավայրերը վարձակալում են երրորդ անձանցից: Մակայն, այս երրորդ անձինք հիմնականում տեղի բնակիչներ չեն: Էթնիկ հայ բնակչությունը հաճախ դժգոհություն է հայտնում ոչ տեղացի ֆերմերների կողմից հողային ռեսուրսների վարձակալության վերաբերյալ:

«Այն ժամանակ պետության ձեռքի տակ եղած ռեսուրսները տեղացիներն էին օգտագործում՝ որոշները հնձելու, որոշները՝ արածեցնելու համար: Իսկ հիմա, շատ դեպքերում, պետությունը արոտավայրերը վարձակալությամբ տալիս է Կախեթիից եկած ֆերմերներին» (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ՝ Նինոծմինդայից, 48 տարեկան):

«Ամեն տարի կոնֆլիկտներ են տեղի ունենում յայլաների համար: Խորհրդային Միության ժամանակ ամեն գյուղ ուներ իր յայլան՝ հսկայական տարածք, որտեղ ամառովա ընթացքում անասուններ էին պահվում: Խորհրդային Միության փլուզումից հետո, հողային բարեփոխումների արդյունքում, այս այսպես կոչված յայլաները բաժանեցին ըստ գյուղերի բնակչության թվաքանակի: Այսօր այս յայլաները պետության սեփականություն են հանդիսանում: Վերջին տարիներին պետությունը կա՛մ աճուրդի է հանում, կա՛մ վարձակալությամբ տալիս է տարբեր մարդկանց/ֆերմերների: Իսկ տեղի բնակչությունը մնում է առանց հողի: Նաև կառավարությունում աշխատող մարդիկ խարդախորեն գրանցվում են դրանք որպես իրենց սեփականություն: Հետո արդարանում են՝ ասելով, որ կոռպերատիվ ունեն, կամ «եթե ես չառնեի, կտան Կախեթիից եկած քոչվորներին»: Մի խոսքով, հողերը խնդրահարույց են: Պետությունը նախ պետք է մտածի՝ այնտեղ ապրող գյուղացիները հող ունե՞ն, թե՞ ոչ, կամ ինչու են մեկնում արտագնա աշխատանքի, թող ուսումնասիրեն այս հարցը, գան մեզ մոտ և խոսենք այս հարցի մասին» (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ՝ Նինոծմինդայից, 62 տարեկան):

Ոռոգման համակարգեր, ենթակառուցվածքներ և գյուղատնտեսական տեխնոլոգիաներ

Վերգետնյա և ստորգետնյա ջրային ռեսուրսներով Վրաստանը Եվրոպայի ամենահարուստ երկրներից մեկն է: Վրաստանը մեկ շնչի հաշվով ունի 14 000 մ³ քաղցրահամ մակերևութային ջուր, մինչդեռ եվրոպական միջինը կազմում է ընդամենը 9 300 մ³: Չնայած այս իրականությանը, ոռոգման համակարգերի հասանելիությունը մնում է էական մարտահրավեր գյուղական վայրերում ապրող մարդկանց համար:

Խորհրդային Միության փլուզումից հետո Վրաստանի ոռոգման համակարգը զգալիորեն վնասվեց: Ըստ Վրաստանի Մելիորացիայի ծառայության տվյալների՝ Խորհրդային Միության տարիներին Վրաստանում ինքնահոս ջրով մատակարարվող հողատարածքները ընդհանուր ծավալը կազմում էր 278 հազար հեկտար: Սակայն 2012 թվականին այս ցուցանիշը նվազել է՝ հասնելով 45 հազար հեկտարի:⁴² Ըստ Վրաստանի Մելիորացիայի՝ այս տվյալներն այսօր եռապատկվել են և կազմում են 138 700 հա: Բացի այդ, կազմակերպության ռազմավարական տեսլականի համաձայն, ջրամատակարարվող հողերի մակերեսը պետք է հասնի 200 հազար հեկտարի:⁴³

Ցավոք, նշված տվյալները բաժանված չեն ըստ շրջանների և մունիցիպալիտետների: Այնուամենայնիվ, դաշտային աշխատանքները ցույց են տալիս, որ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի ոռոգման համակարգերը մնում են ամենահրատապ մարտահրավերներից մեկը: Բացի այդ, բնակչության հետ անցկացված հարցազրույցների ժամանակ հրատապ խնդիրներից է նշվել ոռոգման և խմելու ջրի խնդիրը: Քվեմո Քարթլիից գրուցակիցները հաճախ ասում են, որ իրենց աշխատանքն ու բերքը «այրվում են» ջրի բացակայության պատճառով: Այդուհանդերձ, Մելիորացիայի ծառայությունը նրանցից դեռ ոռոգման ջրի վարձ է գանձում: Հասկանալի է, որ ոռոգման ջրի գինը մեկ հեկտարի համար կազմում է 75 լարի և 75 թետրի: Գյուղացու/ֆերմերի կողմից այս գումարի չվճարումը կապված է պայմանագրի հիման վրա համապատասխան տույժերի և պատժամիջոցների հետ, սակայն այն դեպքում, երբ Մելիորացիայի ծառայությունը, չնայած կնքված պայմանագրին, միևնույն է չի ապահովում անհրաժեշտ ջրով, և գյուղացին տուժում է և բերքը փչանում է, Մելիորացիայի ծառայությունը պատասխանատվություն չի կրում գյուղացուն հասված վնասի փոխհատուցման համար: Այս իրավիճակը մեծացնում է ֆերմերների կողմից Մելիորացիայի ծառայության նկատմամբ անվստահությունը և ավելացնում այն դեպքերը, երբ ֆերմերները հրաժարվում են պայմանագիր կնքել Մելիորացիայի ծառայության հետ:

«Ջրի, ոռոգման ջրի խնդիր կա: Ամեն ինչ այրվում է ջրազրկումից, վարունգ, լոլիկ, պղպեղ: Խորհրդային Միության ժամանակ ոռոգման ջուր կար: Բայց մենք այսօր չունենք: Մեկ հեկտարի համար պետությանը վճարում ենք 75 լարի, հետո ջրի համար իրար հետ ենք կռվում: Մեզ անարդարացիորեն է ջուր բաժանվում, և պատասխանատուն Մելիորացիայի ծառայությունն է: Ոռոգման խնդիրն այն է, որ ոռոգման ջուրը չի բավականացնում, մարդիկ հերթ են կանգնում, բայց հետո տեսնում

⁴² Վրաստանի Մելիորացիա, առաքելություն <https://www.ag.ge/Ge/Mission>

⁴³ Վրաստանի Մելիորացիայի ընթացիկ արդյունքներ <https://www.ag.ge/Ge/Statistic>

եմ, որ իմ 1 հեկտարն այրվում է, բայց այն 20 հեկտարը ավելի շատ է, ուժեղ է դրա համար էլ լուծում է հարցը» (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ՝ Մառնեուլիից, 57 տարեկան):

Այն միտումը, որ խոշոր ֆերմերները ավելի հեշտ են լուծում ոռոգման ջրի հետ կապված խնդիրները, քան փոքր ֆերմերները/գյուղացիները, նկատվում է նաև այլ մունիցիպալիտետներում:

«Մեծ հողեր ունեցողները առանձին ջուր ունեն, նրանք առաջինն են ջրում, հարգում են ջրի բաշխման պատասխանատուներին, նույնիսկ իմ հերթը հասնելու ժամանակ ես չեմ կարողանում ոռոգել» (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ՝ Բոլնիսիից, 49 տարեկան):

Ոռոգման ջրի և համակարգերի խնդիրը սուր է նաև Ջավախեթիում: Բնակիչները դժգոհում են, որ իրենք ստիպված են կախված լինել եղանակից և իրենց աշխատանքի արդյունքը ստանալ այն դեպքում, եթե անձրև տեղա:

«Ֆերմերի ու ոչ միայն նրա, այլ բոլորի հաջողությունը կապված է համապատասխան ենթակառուցվածքների առկայության հետ: Իսկ մենք չունենք ենթակառուցվածքներ: Մեր ամբողջ հույսը բնությունն է, սեզոնին անձրև կլինի՝ բերք կլինի, եթե ոչ՝ ոչինչ չի լինի: Մենք նույնիսկ հակակարկտային միջոցներ չունենք, մի քանի գյուղեր կան, որտեղ կարկուտն արդեն ոչնչացրել է գյուղացիների բերքը: Չեն փորձում ուղղել այս թերությունները: Նինոծմինդայում մեծ ջրային ռեսուրսներ կան, բայց չնայած դրան՝ ոռոգման համակարգեր չունենք (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ՝ Նինոծմինդայից, 62 տարեկան):

2021 թվականին Բոլնիսիի երեք՝ Սավանեթիի (Բմիրհասան), Ճապալայի (Գոչլու) և Սամտրեդո (Ջափարլո) գյուղերի բնակիչները բողոքի ակցիա են անցկացրել՝ պահանջելով ոռոգման ջուր: Հետաքրքիր է, որ այս գյուղերի ոռոգման համակարգի մի մասը օտարված է մասնավոր անձի, ով սեփականաշնորհելով այս պետական ռեսուրսը անարդարացի առավելություն ունի ոռոգման ջրի բաշխման հարցում և կարող է ինքնուրույն որոշել, թե երբ կիսել ոռոգման ջուրը տեղի ֆերմերների հետ: Բոլնիսիի մունիցիպալիտետի ինքնակառավարումը Սոցիալական արդարության կենտրոնի հետ զրույցում հաստատեց, որ նշված գյուղերի ոռոգման համակարգերն օտարվել են մասնավոր անձի, և, հետևաբար, ինքնակառավարումը չի կարող միջամտել այս գործընթացին:⁴⁴ Ոռոգման ջրի խնդիր ամեն տարի ի հայտ է գալիս նաև Մառնեուլիի մունիցիպալիտետի Դաշթափա գյուղում, որտեղ բնակիչները գրեթե ամեն տարի ոռոգման ջրի պահանջով ակցիաներ են անցկացնում:⁴⁵

Նոր գիտելիքների փոխանակում բնակչության հետ

⁴⁴ Բոլնիսիի մունիցիպալիտետի երեք գյուղեր մնացել են առանց ոռոգման ջրի

<https://socialjustice.org.ge/ka/products/bolnisis-munitsipalitetis-sami-sofeli-sartsqavi-tsqilis-gareshea-darchenili>

⁴⁵ Daştepe sakinlərinin məhsulu susuzluqdan məhv olur - əhali suvarma suyu tələb edir

<https://www.marneulifm.ge/az/xeberler/article/45439-dastepe-kendinin-ehalisi-suvarma-suyu-probleminden-sikayetlenirler>

Բնակչության հետ զրույցի ընթացքում հիմնական հարցերից մեկը նոր գիտելիքների ու խորհրդատվական կենտրոնների աջակցության խնդիրն էր: Խորհրդատվական կենտրոնների աշխատակիցներն ասում են, որ անընդհատ աշխատում են բնակչության հետ նոր գիտելիքների փոխանակման հարցով և սերտ հարաբերություններ ունեն ֆերմերների հետ, սակայն բնակչությունն ասում է, որ համապատասխան գերատեսչություններից չեն ստանում անհրաժեշտ նոր գիտելիքներ:

«Մարդկային ռեսուրսների պակասը խնդիր է: Օրինակ՝ ես ինքնուս եմ: Ես ավելի շատ գործնական գիտելիքներ ունեմ, քան տեսական: Համացանցի միջոցով նայում եմ, թե ինչ խնամքի կարիք ունեն բույսերը (կարտոֆիլ, ցորեն) և գործնականում օգտագործում եմ դրանք: Համացանցն էլ հստակ չէ, մի օգտատերն այլ բան է ասում, մյուսը՝ այլ: Այդ պատճառով, մունիցիպալ մակարդակով մասնագիտական ուսումնարաններ են անհրաժեշտ» (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ՝ Նինոմմինդայից, 39 տարեկան):

Գյուղատնտեսական գիտահետազոտական կենտրոնի աշխատանքին վերաբերող փորձագետների մի մասի գնահատականը նույնպես քննադատական է: Նրանց խոսքով, կենտրոնը պատշաճ աշխատանք չի կատարում, և հաճախ նրանք նվազագույն դեր ունեն գյուղատնտեսության ոլորտում նոր գիտելիքների ստեղծման գործընթացում:

«[Կենտրոնը] ոչինչ չի անում նոր գիտելիքներ ստեղծելու համար: Սա ուղղակի աշխատավայր է: Այստեղ արժեքավոր ոչինչ չի ստեղծվում: Դրա համար էլ կիսվելու բան չունեն» (խորացված հարցազրույց փորձագետի հետ, հարցազրույց N1):

Գյուղատնտեսության գիտահետազոտական կենտրոնի ներկայացուցչի խոսքով՝ գործակալությունն ակտիվորեն աշխատում է նոր գիտելիքների ստեղծման վրա: Բացի այդ, նրանց գործունեությունը հիմնված է հենց ներքևից՝ ֆերմերներից, ստացված պահանջների վրա: Կենտրոնը համեմատաբար նոր գերատեսչություն է, որը գործում է 2014 թվականից, և նրա հիմնական աշխատանքի ոլորտներն են (1) անասնապահությունը, (2) այգեգործությունը, (3) հողը և (4) պահեստավորումը/վերամշակումը: Կենտրոնն ակտիվ աշխատանքներ է տանում խաղողի եզակի տեսակներ ստանալու, միամյա մշակաբույսերի սերմերի, ցորենի սերմերի և այլ տնկիների ստանդարտացման, ցեղային անասունների և թռչունների բուծման ուղղությամբ: Բացի այդ, կենտրոնը բնակչության հետ աշխատում է խորհրդատվական կենտրոնների միջոցով:

«Խորհրդատվական կենտրոնն ինձ կանչում է թեմատիկ թրեյնինգի, հավաքում են մարդկանց և հանդիպումներ ենք անցկացնում տեղացիների հետ: Կազմակերպվում է դաշտային օր և ստեղծվում են ցուցադրական աշխատանքներ» (խորացված հարցազրույց կենտրոնի ներկայացուցչի հետ):

Հատկանշական է, որ կենտրոնի կայքում իսկապես առկա են կարևոր նյութեր գյուղատնտեսության հարցերի վերաբերյալ: Կենտրոնի կայքի գլխավոր էջերից մեկը ազդոխորհուրդներն է, որտեղ տեղադրված է կարտոֆիլի, լոլիկի, վարունգի և այլ մշակաբույսերի մշակման տեխնոլոգիաների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն,

ინչაყუას სან აჟ კონკრეტ ჰორხორჟნერ: ოსკაჟან თეჟეკორჟონერ მჟაჟან ორასგერენოდ ჯ ს ხასანელი ჯე აეტოსკან ეევიჟინ ჯორასეტოჟ ზერმერნერინ/კორეაგინერინ:

სორ კითელიჟნერის ს თეჟინორეკიანერის ხასანელიკორჟანს ჰეჟანთოდ ნორეკიჟორენ კააკვად ჯ ანდოსანეკ ანნეჟი კაჟაჟარის ს ჰრავდონეჟი ჟეთ: ჯეთსარარ, აჟს ხარგრ ნაჟათასკ ნინი ნჟ მჟაჟან ჰეჟესაგნელ კორეაგინერის ს ზერმერნერის თნთესორჟონერ, აჟასათოჟი ს ჳერეჟი ართორეკორეკიანეკორჟონენ ნი თნთესელ ოამანასკრ, აჟ აჟან ავლელი ჯათ ათნჟდოდ ჯ აკარენაჟინ ანდოსანეკორჟონერ ს ᳚ნასკორჟანს ავლელი ჟან ჯახერინ: ჳარნორ ჯ, ნორ სორ კითელიჟნერის, მნეჟორენერის ს თეჟინიკაჟი თრამარეკორეკიან კორდონეკაგოდ ხაჟელი ათნდენ კელიმასკან ᳚ოჟიჟორჟონენერის ზონინ კორეკორეკიან ნკათოდ მართახრავლერნერ ს კორეაგინერის ათჟნ დათაგად ეჟვარორჟონენერ:

ჯათოკ დრაკრერ ს თეჟასკან კარეჟნერ

კორჟონენ თნთესოდ კორეკათნთესასკან დრაკრერის ს ნაკდმავარასკან ᳚ასთათეჟერის ეჟთარკოდორ გოჟ ჯ თაჟი, ნორ აეტოსკან დრაკრერის მნდ მასრ ნორეკვად ჯ კორეკათნთესორჟანს ხამაჟიჟ კარკაგმანერ, ს კრეჟე ჳორ დრაკრერე ნერათოდ თნ ᳚აკდმარეჟი მჟასკაროჟსერ: ოსკაჟან კა ჳერე მჟასკაროჟს ᳚რასკანს ჰათორე, ჰეჟრ ს გიჟორთსნერე, ნორნეკ აეტორჟონერ ავლელი კენთორნაგად ჯ ᳚ნორჟონენ გოგარეკორეკიან: 2008-2021 ჰვასკანსნერინ ჰათორეჟი თორეჟიჟანსერე ხასელ თნ 286,6 მინ ჟარჟი: ᳚სკ 2022 ჰვასკანსინ აეტორჟანს კორეკიანს ჰათორეჟი მჟერმანს ნორეკიჟი თორეჟიჟანს კკადმი 60-70 მინ ჟარჟი.⁴⁶ ორთს კორეკიანს, ჰეჟი აჟანთაგინერის ᳚ერასკანეკმანს დრაკრერის ჟრჟანსკინეროდ აეტორჟონერ ჟოგოდ ჯ აჟანთაგინერის ᳚ერასკანეკმანს დჟასერის 70%-ე.⁴⁷ ზიჟორთსნერის თორეჟიჟანს დრაკრერის ჟრჟანსკინეროდ ሂჟარჟიჟი ᳚ინჟნავარ ჯანრასეტორჟანს კორეკათნთესორჟანს ნაჟარარორჟონერ 2021 ჰვასკანსინ დჟასელ ჯ ავლელი ჳან 1 მინ ჟარჟი (მსკ კიჟორამ მანთარჟინი თორეჟიჟანს კორეკიან კადმოდ ჯ 0,1 ჟარჟი).⁴⁸

ჯარკ ჯ ნეჟ, ნორ ნჟ 2021-2027 ჰვასკანსნერის ნაკდმავარორჟანს მნე, ნჟ ჳე აჟ ᳚ასთათეჟეროდ მანრამანს ჯი ნკარაკრეჟოდ, ჰე ჰინჟი თნ აჟე მჟასკაროჟსერე ᳚აგათიკ აჟასკორჟონენ სთანთოდ, ს ჯი ᳚აგათრეჟოდ, ჰე ჰინჟი ნჟვად მჟასკაროჟსერის ჟეთ მჟასინ აჟასკორჟონენ ჯენ სთანთოდ სან აჟე მჟასკაროჟსერე ს თნთესორჟონენერე, ხასკაჟეს აჟნ ეჟეჟოდ, ჳერე, ᳚რინასკ, ሂავაჟსეჟი კორეკიანსერე ხაჟასი თნ ჰთთოდ კართოჟიჟი ᳚ასჟასანს, ჰრასმანს ს აჟე ჰინეჟინერის მასინ: ᳚აგინ აჟე, ხაჟასკი თნ ჰინთოდ ეჟეჟერ, ჳერე კორეკიანსერე სთიჟვად თნ ჰინთოდ ᳚არკაჟეს ეჟენ ნეთელ ხაჟეჟად ᳚ერეჟე.⁴⁹

⁴⁶ ᳚ათორეჟი თორეჟიჟანს, ᳚ასკანს ნჟ ჰე კინთი, აჟე ᳚არანჟანჟი ხამარ <https://netgazeti.ge/business/627223/>

⁴⁷ ᳚ეჟი აჟანთაგინერის ᳚ერასკანეკმანს დრაკრერ <https://rda.gov.ge/ge/programs/482160-chais-plantatsiebis-reabilitatsiis-programa/52ac0a48-3bac-4516-8b6f-733bce3f907c>

⁴⁸ ሂჟარჟიჟი ᳚ინჟნავარ ჯანრასეტორჟანს კორეკათნთესორჟანს ნაჟარარორჟანს 2021 ჰვასკანსი კესკორეკიან: <http://adjara.gov.ge/uploads/Docs/2206bf789344ea844a358ae0fb0fad1e.pdf>

⁴⁹ 700 თონსას კართოჟიჟი მჟაჟან ሂკასთათნთი. ሂავაჟსეჟი კართოჟიჟი ჯენ კარორანთი ᳚ასათელ ს ᳚ათრასთოდ თნ ეგნელ ᳚არეჟასეტარანსი ეჟინაგ: <https://bit.ly/3RZCO3x>

Խոսելով տեղի գյուղացիների/ֆերմերների հետ՝ նրանք կիսվում են իրենց դիտարկումներով և հարցերով այն մասին, թե ինչպես են գյուղատնտեսական ծրագրերը բաշխվում տարածաշրջաններում և ինչու չկան հատուկ ծրագրեր և նախագծեր՝ աջակցելու իրենց տարածաշրջանի արտադրած բերքին:

«Վրաստանում գյուղատնտեսության զարգացման լավ հնարավորություն կա: Ես հյուր եմ եղել Կախեթի խաղողագործներից մեկի մոտ, իրականում նույն խնդիրներն են, ինչ այստեղ: Նկատի ունեմ փոքր տարածքը, աշխատուժը կամ ենթակառուցվածքը: Բայց մի բան նկատելի էր, որ պետական ծառայություններ ստանալու գործընթացում ավելի շատ մարդիկ են ինտեգրված: Կարող ենք այս իրադարձությունը կապել գինեգործության մշակույթի պատմականության հետ: Կամ գուցե ավելի շատ ռեսուրսներ են ներդրվում ոլորտում: Մեր կարտոֆիլը պատմական անցյալ չունի, պարզապես բոլորը գիտեն, որ Ջավախեթին կարտոֆիլի ու պանրի անկյունն է, և մեր կարտոֆիլը իսկապես համեղ է» (խորացված հարցազրույց ֆերմերի/գյուղացու հետ Նինոծմինդայից, 58 տարեկան):

Գյուղատնտեսության նախարարության ծրագրերն ու ծառայությունները հաճախ չեն տեսնում շրջանների մարտահրավերները: Այն գյուղացիները/ֆերմերները, ովքեր տեղեկություն ունեն տարբեր ծրագրերի մասին, հաճախ չեն կարողանում օգտվել այդ ծրագրերից տարբեր գործոնների պատճառով: Մառնեուլիի մունիցիպալիտետի ֆերմերներից/գյուղացիներից մեկն ասում է, որ փոքր հողագործների մեծամասնությունը չի կարող օգտվել «Մերանի ր ապագան» բազմամյա մշակաբույսերի զարգացման ծրագրից, քանի որ նրանց համար միամյա մշակաբույսերի աճեցումը կապված է իրենց ամենօրյա ապրուստի հետ և նրանք չեն կարող մասնակցել նման ծրագրերին:

«Միամյա մշակաբույսերի համար «Մերանի՛ր ապագան» չի ֆինանսավորվում: Ըստ այդմ, մարդիկ ասում են, որ մինչև այդ ծրագրից օգտվեն, կարող են սովամահ լինել, ուստի միակ ճանապարհը գոյություն ունեցող գործունեությունը շարունակելն է, այլ ոչ թե մասնակցել ծրագրին և սպասել 10 տարվա ընթացքում ստացվելիք շահույթին» (խորացված հարցազրույց գյուղացու հետ Մառնեուլիից, 53 տարեկան):

Նույն կարծիքն ունեն Նինոծմինդայի գյուղացիները: Ըստ ֆերմերներից/գյուղացիներից մեկի.

«Գրեթե ամեն տարի պետությունը համաֆինանսավորմամբ հայտարարում է սարքավորումների (տրակտորներ, կոմբայններ) ձեռքբերման մասին, որտեղ 60 տոկոսը վճարում է պետությունը, 40 տոկոսը՝ սեփականատերը, կամ 50-50 տոկոս՝ ըստ ծրագրի: Հիմա տեսեք, ես 2 հեկտար հող ունեմ, 6-7 կով ու զբաղվում եմ նաև կարտոֆիլի աճեցմամբ, եթե տեխնիկան արժե 100 000 լարի, դրա 40 տոկոսը 40 000 լարի է: Ես ամբողջ տարվա ընթացքում այդքան եկամուտ չեմ ունենա, ոչ էլ այնքան գույք ունեմ, որ բանկից վարկ վերցնեմ, ուստի այդ սարքավորումները կգնի խոշոր ֆերմերը: Խոշոր ֆերմերը կարող է այդ տեխնիկայի կարիքն անգամ չունենա, բայց պետության օգնությամբ այն գնում է կես գնով, հետո իր գնով վաճառում ուրիշներին (խորացված հարցազրույց գյուղացու հետ Նինոծմինդայից, 49 տարեկան):

Ֆերմերների հետ զրույցի ընթացքում ամենահրատապ մարտահրավերներից մեկն է նշվում նաև իրացման շուկաների խնդիրը: Հաճախ տեղացիներն ասում են, որ իրացման գործընթացում նրանք չեն տեսնում պետության աջակցությունը: Ջավախեթիում հաճախակի են լինում դեպքեր, երբ ֆերմերները/գյուղացիները ստիպված են լինում թափել բերքը, ինչը լրացուցիչ բեռ է դնում բնակչության վրա: Այն իրավիճակում, երբ կազմակերպված, լավ կառավարվող և կայուն իրացման շուկա (ներառյալ պահեստային սառնարանների միջոցով) գոյություն չունի՝ տեղական կամ ազգային մակարդակով, ֆերմերների/գյուղացիների հետ դժվար է խոսել արտահանման զարգացման և ներմուծման փոխարինման մասին:

Եզրակացություն և ռեկոմենդացիաներ

Ներկա աշխարհաքաղաքական ճգնաժամի, Կորոնավիրուսի համաճարակի և ուսուկրափնական պատերազմի ֆոնին ևս մեկ անգամ պարզ դարձավ, որ պետությունները պետք է երկարաժամկետ կերպով աշխատեն սեփական գյուղատնտեսության զարգացման և հզորացման ուղղությամբ: Այս հարցը կարևոր մարտահրավեր է նաև Վրաստանում, քանի որ, ինչպես արդեն նշվեց, Վրաստանի սպառողական զամբյուղի 80 տոկոսը բաժին է հասնում ներկրվող ապրանքներին: Ըստ այդմ, պետության և միջազգային կազմակերպությունների կողմից գյուղատնտեսությանն աջակցող ներդրումները կարևոր դեր են խաղում: Սակայն, այս ռեսուրսների, ծրագրերի և ծառայությունների արդար, հավասար և ներառական բաշխումը էական մարտահրավեր է հատկապես էթնիկ փոքրամասնություններով բնակեցված շրջաններում:

Հարկ է նշել, որ Վրաստանի էթնիկ փոքրամասնություններով բնակեցված շրջաններում գյուղատնտեսությունը առաջատար տնտեսություն է: Սակայն, գյուղատնտեսական ծրագրերի և ծառայությունների պլանավորման ժամանակ, պետության կողմից հատուկ ջանք չի նկատվում, որպեսզի այդ ռեսուրսները հասանելի դառնան այս շրջաններում ապրող մարդկանց: Ավելին, այս շրջաններում առկա ռոտզման ենթակառուցվածքը բնութագրվում է զգալի մարտահրավերներով, առկա է գյուղատնտեսական տեխնիկայի խնդիր, ֆերմերներին հասանելի չեն նոր գիտելիքները, եթե չխոսենք այն մասին, որ չկան հատուկ ծրագրեր, որոնք ուղղված կլինեին անմիջականորեն այս շրջանների կարիքներին և համատեքստին:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ցանկանում ենք մեր ռեկոմենդացիաները ներկայացնել Վրաստանի կառավարությանը և շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարությանը, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպություններին:

1. Նախարարությունը պետք է գնահատի Վրաստանի գյուղատնտեսության և գյուղի զարգացման 2021-2027 թվականների պետական ռազմավարությունը և համապատասխան տարեկան գործողությունների ծրագրերը՝ բազմազանության և ներառականության տեսանկյունից, և համապարփակ ուսումնասիրությունների և մասնակցային, խորհրդատվական հարթակների ստեղծման միջոցով հաշվի առնի էթնիկ փոքրամասնությունների համայնքներից գյուղատնտեսության ոլորտում ներգրավված ինքնազբաղվածների և ֆերմերների կարիքները:
2. Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, պլանավորման և իրականացման ժամանակ պետությունը պետք է հաշվի առնի փոքր հողատարածք ունեցող ինքնազբաղված անձանց շահերն ու կարիքները և խրախուսի նրանց գործունեությունը:
3. Նախարարության համապատասխան գերատեսչությունները պետք է սկսեն ծառայությունների և նախագծերի հասանելիության և դրանցում էթնիկ փոքրամասնությունների մասնակցության արդյունքների մասին էթնիկ նշիչներով զեկուցել:
4. Նախարարությունը պետք է իր ծառայությունների և ծրագրերի, ինչպես նաև դրա հետ կապված վարույթների (դիմումների ընդունում, բանավոր հաղորդակցություն և այլն) մասին տեղեկատվություն տրամադրի փոքրամասնությունների լեզուներով և պետական լեզվին չտիրապետող Վրաստանի քաղաքացիներին ապահովի նշված ծառայությունների անսահմանափակ հասանելիություն: Թարգմանչական գործընթացին զուգահեռ գործակալությունները պետք է մշակեն հատուկ ռազմավարություն՝ խթանելու էթնիկ փոքրամասնությունների իրազեկումը և մասնակցությունը:
5. Նախարարությունը և համապատասխան գերատեսչությունները պետք է ապահովեն պահեստային ենթակառուցվածքների, այդ թվում՝ սառնարանների կազմակերպումը:
6. Նախարարությունը և համապատասխան գերատեսչությունները պետք է ապահովեն իրացման տեղական/ազգային շուկաների ստեղծումը/զարգացումը՝ ֆերմերներին/գյուղացիներին գյուղատնտեսական տնտեսությունում կայունության զգացում և դրա հետ կապված սոցիալական ակնկալիքներ հաղորդելու համար:
7. Նախարարության համապատասխան գերատեսչությունները պետք է ուսումնասիրեն 1990-ականներին և ավելի ուշ հողային բարեփոխումների գործընթացի թերությունները և ելնելով այս շրջաններում ապրող ֆերմերների կարիքներից՝ մշակեն այդ թերությունները վերացնելու և/կամ մեղմելու քաղաքականություն, այդ թվում՝ պետության հաշվեկշռում գտնվող հողերը օրինական մեխանիզմներով նրանց փոխանցելու միջոցով:
8. Դրա հետ մեկտեղ, Հողերի կայուն կառավարման և հողօգտագործման մոնիտորինգի ազգային գործակալությունը պետք է հատուկ քայլեր ձեռնարկի պետական հաշվեկշռում գտնվող հողերի մրցույթային կարգով վարձակալության տալու գործընթացում և հաշվի առնի էթնիկ փոքրամասնությունների կարիքները:
9. Նախարարությունը և ՄՊԸ Վրաստանի մեխորացիան պետք է վերանայեն իրենց գործունեությունը ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջաններում և առաջնահերթություն տան ոռոգման համակարգերի զարգացմանը: Բացի այդ, եթե ֆերմերը վճարի պայմանագրով նախատեսված գումարը, ապա պետությունը պետք է

փոխհատուցում տրամադրի գյուղացուն ՄՊԸ Վրաստանի մելիորացիայի կողմից ջուր չմատակարարելու դեպքում:

10. Նախարարությունը և նրա ենթակա գերատեսչությունները պետք է աշխատեն փոխելու իրենց աշխատակիցների վերաբերմունքը էթնիկ խմբերի նկատմամբ, ինչը կբարձրացնի նրանց գիտելիքները, զգայունությունը և մոտիվացիան՝ ավելացնելու գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիների աջակցությունը՝ ելնելով նրանց կարիքներից:
11. Նախարարությունը և Գյուղի զարգացման գործակալությունը պետք է ավելացնեն ազգային փոքրամասնությունների լեզվին տիրապետող աշխատողների թիվը՝ ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջանների խորհրդատվական կենտրոններում:
12. Գյուղատնտեսական գիտահետազոտական կենտրոնը պետք է ակտիվորեն սկսի աշխատել փոքրամասնություններով բնակեցված շրջաններում առկա մարտահրավերներն ու հնարավորությունները ուսումնասիրելու և ինքնազբաղված և տեղական ֆերմերներին գյուղատնտեսության ոլորտում նոր գիտելիքներ տրամադրելու ուղղությամբ:
13. Վրաստանի գյուղատնտեսությանն աջակցելու գործընթացում միջազգային և դոնոր կազմակերպությունները պետք է Վրաստանի կառավարությանը խնդրեն գնահատել իրականացվելիք ծրագրերը բազմազանության և ներառականության տեսանկյունից: